# ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

"ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆ"-Ի ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ, ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ, ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԷՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Թորոնթօ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ կողքին հայ դպրոցը ամենաամուր խարիսխն է մեր ազգի գոյատեւման, սփիւռքի հայութեան պայմաններուն մէջ:

Մենք բարձրօրէն կը գնահատենք Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ կողքին քսանհինգ տարիներ առաջ «Ս. Սահակ և Մեսրոպ» շաբաթօրեայ վարժարանը, որ տարիներու ընթացքին հայեցի դաստիարակութիւն ջամբած է հարիւրաւոր հայ մանուկներու:

Ընդառաջելով Միացեալ Նահանգներու և Կանադայի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան, 25-ամեայ յոբելեանի առթիւ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն այսու Մեր հովուական կը յղենք Ձեզի բոլորին Մեր ջերմագին գնահատանքը և հայրապետական օրհնութիւնը, սրտանց մաղթելով, որ միշտ նոյն եռանդով ու նուիրումով շարունակէք Ձեր ազգանուէր դաստիարակչական գործը, ի խնդիր հայոց մայրենի լեզուի և հայ մշակոյթի արժէքներու պահպանման ու զարգացման:

Այս առթիւ Մենք յատուկ գնահատանքի խօսք կ'ուղղենք ուսուցչական ամբողջ կազմին, որ տարիներ շարունակ անձնուիրաբար կ'աշխատին իբրև բարի սերմնացաններ մեր մանուկ սերունդներու անդաստանին մէջ, ողողելով անոնց հոգիները հայ լեզուի ու մշակոյթի լոյսերով:

Վարձքերնիդ կատար սիրեցեալ կրթական մշակներ:

Օրհնութիւն «Սուրբ Սահակ և Մեսրոպ» վարժարանի 25-ամեայ վաստակին և անոր առաքելութեան:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» /Հռոմ ԺԵ 13/: Ամէն:

Վազգէն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2 Դեկտեմբերի
1980 Փրկչական ամի,
և ի թուականիս Հայոց ՌՆԻԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

Հմր. 1038